ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԻ.

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Մկրտիչ Սրբազնագոյն Հայրապետն ամենայն Հայոց որոշել է, յաջողութեամբն Աստուծոյ՝ սրբալոյս միւռոնի օրհնութիւն կատարել առաջիկայ սեպտեմբեր 28-ին, Վարագայ ս. Խաչի տօնի օրը, որ տաճարորդ տարեդարձն է Իւր Քահանայապետական Օծման։

Վեհափառ Հայրապետի բարեհաճ տնօրինութեամբ յատուկ հրաւէրներ կուղարկուին մեր վիճակաւոր առաջնորդներին։ Փոխանորդ վարդապետներ, ցանկացող վանահայրեր և եկեղեցեաց աւագերէցները կարող են այս սրբազան հանդիսին ներկայ գտնուել՝ ըստ կարելւոյն մեծ թուով այլ եկեղեցական պաշտօնէից հետ։

Օր առաջ հրաւէր է կարդացուում այսու նաև ի սփիւռս աշխարհի տարածեալ հայ ժողովրդեան, որի իւրաքանչիւր անդամը Միածնի Իջման Տաճարում օրհնուած սուրբ միւռոնի դրոշմն է կրում իւր ճակատին և այդպէս միանում Քրիստոսի հօտին՝ պատրաստուել խուռներամ բազմութեամբ դիմելու դէպի հանուրց Հայաստանեայց հոգևոր ծննդեան մայր այդ սուրբ տաճարը, ս. Հոգւոյ

շնորհաց առատաձիր գեղման խորհրդաւոր ժամին. յիշելով միանգամայն, որ 1600-րդ տարին է բոլորում այն յաւերժայիշատակ օրից, երբ երկնային ցուցմամբ հրաշակերտ տաճարի լուսեղէն կամարները ձգուեցան, հովանի և անքոյթ նաւահանգիստ լինելու Հայութեան՝ դարերի յորձանքի դէմ։

Ս. Միւռոնի օրհնութեան առթիւ Մ. Աթոռ դիմող ուխտաւորներին պատշաճաւոր ընդունելութիւն ցոյց տալու և այս նկատմամբ կարևոր եղած նախապատրաստութիւններն այժմեանից հոգալու համար Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց սրբատառ կոնդակով մի յանձնաժողով կարգել, որի անդամներն են՝ Գեր. Յուսիկ եպիսկոպոս, Տ. Մեսրոպ, Տ. Կարապետ, Տ. Յուսիկ և Տ. Կորիւն վարդապետներ, Տ. Արտակ աբեղայ և Շնորհ. Մկրտիչ սարկաւագ։ Յանձնաժողովին իրաւունք է տուած որոշ նորոգութիւններ և այլ ծախքեր անել, ինչպէս և, առանձին ժապաւինեալ մատեանի մէջ արձանագրելով՝ ժողովել բարեպաշտ ժողովրդեան նուէրները։ Յանձնաժողովը պարտք կհամարէ յայտնելու ի հարկին վաղօրօք, թէ ինչ միջոցներ է ձեռք առել ուխտաւորների դիւրութեան և հանդէսին վերաբերեալ հաղորդակցութեանց համար։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ՏՓԽԻՍ.

Աղիս Վ.Հ. Հայրապետը մարտի 13-ին, հինգշաբթի, Երևանի վերայով ուղևորուեց դէպի Տփխիս։ Նորին Ս. Օծու-